

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

<i>Ծրագրի անվանումը</i>	Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի վերհանում
<i>Դիմող կազմակերպության անվանումը</i>	Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն (ՀՄԻԿ) ՀԿ
<i>Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ</i>	Գևորգ Մանուկյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ. թիվ 2. Հեռ: +374 322 2 29 67 Բջջ.: +374 91 200 965 Skype manoukian_gevork Էլ.փոստ: gmanoukian@acrpc.am
<i>Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)</i>	Լոռու մարզ, ք. Վանաձոր,
<i>Ծրագրի տևողությունը</i>	12 շաբաթ
<i>Ծրագրի հակիրճ նկարագրիրը</i>	Ծրագիրը ներկայացվում է <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի հետ համատեղ: Այն վերաբերում է Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսագերծման խնդրին: Նախատեսվում է վերհանել նշված ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը, հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման վերաբերյալ հիմնավորված, կառուցողական առաջարկներ մշակել և դրանք ներկայացնել ՀՀ Կառավարությանը և ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեին: Ծրագիրը նախատեսում է նաև բարձրացնել շահառուների իրազեկվածության մակարդակը Հայաստան ավտոմեքենա ներկրման դեպքում ավտոմեքենայի մաքսային արժեքն ըստ ներկրողի փաստացի կատարած և փաստաթղթերով հիմնավորված ծախսերով, այն է՝ գործարքի գնի մեթոդով մաքսագերծման ընթացակարգի մասին:
<i>ԲՀԱ-ից պահանջվող Գումարի չափը</i>	1499000
<i>Ներդրման գումարի չափը</i>	783500
<i>Ծրագրի բյուջեն (նշել դրամով)</i>	2282500
<i>Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)</i>	<Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի խմբագրություն

Դիմող կազմակերպության/անձերի նկարագրություն (առավելագույնը կես էջ)

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը (ՀՄԻԿ) հիմնվել է 1988թ. ամռանը Վանաձոր քաղաքում: Գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարությունում 1995թ. սեպտեմբերի 13-ին: *Առաքելությունն է՝ նպաստել Հայաստանում հասարակության իրավական մշակույթի զարգացմանը՝ գիտական գործունեության, կրթության, տեղեկատվության տարածման և քարոզչության միջոցով:*

Իրականացրել է ավելի քան 100 մեծ ու փոքր ծրագրեր: 2002թ. հավատարմագրվել է ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչությանը, իսկ 2007թ. ստացել է հատուկ խորհրդատվական կարգավիճակ ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում: ՀՄԻԿ-ը 2005 թվից համակարգում է *Հանուն կրթության համընդհանուր քարոզարշավի* <http://www.campaignforeducation.org/en/> (ՀԿՀՔ) հայկական կոալիցիայի գործունեությունը: Հանրային ցանցում համակարգում է Մարդու իրավունքների պաշտպանության հանձնախմբի աշխատանքը: Անդամակցում է ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում հատուկ խորհրդատվական կարգավիճակ ունեցող հայաստանյան ՀԿ-ների դաշինքին և Արևելյան գործընկերության Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովին:

2003-2004թթ. «Թրանսփերենսի ինթերնեշնլ» ՀԿ հետ համագործակցությամբ իրականացրել է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրազեկության բարձրացման ծրագիր, որի արդյունքում Մարդու իրավունքների գրադարանում ստեղծվել է *Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտի տեղեկատվության* բաժին:

2005-2009թթ. ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի «*Աջակցություն հակակոռուպցիոն նախաձեռնություններին*» ծրագրում եղել է Լոռու մարզային համակարգողը և հաջողությամբ իրականացրել է ծրագիրը:

«*Վանաձորյան խճանկար*» շաբաթաթերթը գործում է ՄԻՄ Տպագրատուն ՍՊԸ կազմում: Լույս է տեսնում 2000թ-ի սեպտեմբերի 21-ից: Այն անկախ լրատվական-գովազդային թերթ է:

Թերթը հինգ տպագրական մամուլ ծավալ ունի՝ 20 էջ: Կազմը գունավոր է:

Տպաքանակը 2500 օրինակ է: Թերթը տարածվում է Վանաձոր քաղաքում և Լոռու մարզի մի շարք այլ համայնքներում, այդ թվում՝ Սպիտակ, Ստեփանավան քաղաքներում:

Շաբաթաթերթի հիմնադիրը Հայկազ Սիմիկյանն է:

Թերթում տպագրվում են ինչպես տեղական լրատվություն՝ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների լուսաբանում, լրագրողական հարցումներ տարբեր թեմաներով, այնպես էլ քաղաքացիներին հուզող խնդիրների ու հարցերի մասին հոդվածներ, հարցազրույցներ մշակույթի, սպորտի եւ այլ ոլորտի մարդկանց հետ, առքուվաճառքի մասին հայտարարություններ, առողջ ապրելակերպի, ֆուտբոլի էջ, հեռուստածրագրեր, ժամանցային ու ուսուցողական հոդվածներ:

Թերթը ունի իրավաբանի անկյուն, հոգեբանի անկյուն, որտեղ մեր ընթերցողները դիմում են իրենց խնդիրներով եւ ստանում մասնագետների խորհրդատվությունը:

Թերթը ճանաչված է ու սիրված վանաձորցիների կողմից:

Ծրագրի նկարագրություն (առավելագույնը երկու էջ)

(Խնդրում ենք ներկայացնել խնդրի համառոտ վերլուծությունը, նկարագրել ծրագրի նպատակները և ինչպե՞ս էք նախատեսում հասնել այդ նպատակներին: Նշեք, ովքե՞ր են ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, ինչ մեթոդաբանություն է կիրառվելու, և որո՞նք են ակնկալվող արդյունքները և ազդեցությունը)

1.Խնդրի համառոտ վերլուծություն: Հայաստան ապրանքներ ներկրող ֆիզիկական անձիք, փոքր ու միջին տնտեսավարողները մաքսազերծման ընթացքում բախվում են տարբեր խոչընդոտների: Խոշոր գործարարների համեմատությամբ նրանք տնտեսական անհավասար մրցակցության պայմաններում են և հարկադրաբար զգալիորեն ավելի մեծ գումար են վճարում, քանի որ Մաքսատունը ներկրողի ներկայացրած վճարային փաստաթղթերը հայտարարելով անարժանահավատ մաքսային արժեքը որոշում է տվյալ ապրանքի շուկայական գնով, և ոչ թե փաստացի կատարված և փաստաթղթերով հիմնավորված ծախսերով, այն է՝ գործարքի գնի մեթոդով:

Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Մաքսատունը խոչընդոտում է ներկրողի կողմից ապրանքի գործարքի գնի մեթոդով հայտարարագրումը: Իրավաբան Սերգեյ Գրիգորյանի գործով ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը բեկանել էր Վարչական դատարանի վճիռը և պարտավորեցրել ՀՀ կառավարությանն առնչվող Պետական եկամուտների կոմիտեին (ՀՀ ԿԱ ՊԵԿ) Գրիգորյանի ճապոնիայից ներկրած ավտոմեքենան մաքսազերծել գործարքի գնի մեթոդով, այսինքն՝ 2000 դոլարով ավելի ցածր մաքսատուրքով, քան պահանջել էին մաքսային տեսուչները: Հետագայում, սակայն Վճռաբեկ դատարանը մերժեց հայցը, իսկ ՀՀ Սահմանադրական դատարանը 2014թ. դեկտեմբերի 02-ի որոշմամբ Գրիգորյանի կողմից վիճարկվող օրենսդրական դրույթի մասով գործը կարճեց՝ ըստ էության մերժելով նրա դիմումը: Նշված և նմանատիպ այլ գործերում առկա են աղաղակող փաստեր, որոնք վկայում են **Հայաստան ներկրվող ապրանքների մաքսազերծման գործընթացում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի մասին:**

2014թ. զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանն անդրադառնալով ոլորտին, նշել է, որ ՊԵԿ-ը չի ներկայացրել հանրությանը մատչելի որևէ փաստաթուղթ, ուր հստակ նշված կլինեին մեքենաների մաքսային արժեքները և դրանց որոշման կանոնները: Արդյունքում՝ մարդիկ անիրազեկ են իրենց գնած ավտոմեքենաների մաքսազերծման գումարի չափին և դրա որոշման կարգին:

Խնդիրն ընդգրկում է տնտեսության բոլոր ոլորտները, սակայն սույն փոքր ծրագիրը կսևեռվի միայն ավտոմեքենաների մաքսազերծման հարցի վրա:

2.Ծրագրի նպատակները: Ծրագրի նպատակներն են՝ պարզել Հայաստան ներկրվող ավտոմեքենաների մաքսազերծման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը, դրանց նվազեցման վերաբերյալ հիմնավորված առաջարկներ մշակել և դրանք ներկայացնել ՀՀ Կառավարությանը և ԿԱ ՊԵԿ-ին և բարձրացնել շահառուների իրազեկությունը խնդրի վերաբերյալ:

3.Ծրագրի նպատակներին հասնելու ուղիները և մեթոդաբանությունը: Կկիրառվեն հետևյալ ուղիները և մեթոդները. սոցիոլոգիական հետազոտություն և հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման կառուցողական առաջարկների մշակում և ներկայացում ՀՀ Կառավարությանը և ԿԱ ՊԵԿ-ին, լրագրողական դիտարկումներ, հարցախույզ և դրանց արդյունքների ամփոփում, իշխանության իրավասու մարմինների հետ համագործակցություն, սոցիոլոգիական հետազոտության և լրագրողական դիտարկումների, հարցախույզի զեկույցների հրատարակում, ՀՄԻԿ կայքէջի Մարդու իրավունքների կրթության (ՄԻԿ) ֆորումում <http://acrpc.am/forum/> առցանց թեմատիկ քննարկում, շահառուների իրազեկության բարձրացում:

ՀՄԻԿ ՀԿ - հիմնական հայտատուի պարտականությունները և լիազորությունները:

- Ոլորտի իրավասու պաշտոնյաների հետ հանդիպումների, քննարկումների և նամակագրության միջոցով ձեռք կրերվի համագործակցության համաձայնություն:

- ՀՄԻԿ www.acrpc.am կայքէջի՝ որպես շահառուների իրազեկության բարձրացման գործիքի նորացում կկատարվի ծրագրավորող մասնագետի կողմից:

- «*Սոցիոմետր*» անկախ սոցիոլոգիական կենտրոնի միջոցով կանցկացվի հանրային կարծիքի հետազոտություն պարզելու համար ավտոմեքենաների մաքսազերծման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը և կմշակվեն հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման համապատասխան առաջարկներ: Հետազոտական զեկույցը կտպագրվի <Վասն Արդարութեան> գիտական հանդեսի 73-րդ համարում:

Վանաձորյան Խճանկար լրատվամիջոց-ի պարտականությունները և լիազորությունները:

- <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթում կբացվի կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագիր, ուր կտպագրվի ամսական երկու նյութ. հարցազրույցներ, ծրագրի ընթացքը լուսաբանող իրազեկումներ: Կկազմվի հարցաշար և կանցկացվեն լրագրողական դիտարկումներ, հարցախույզ ինչպես շահառուների, այնպես էլ մաքսային ծառայողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում: Լրագրողական դիտարկումները և հարցախույզը կամփոփվեն առանձին զեկույցում, որը կհրատարակվի թերթում:

-Ծրագրի վերջին շաբաթվա ընթացքում կկազմակերպվի կյոռ սեղան-քննարկում շահառուների ներկայացուցիչների, ՔՀԿ-երի, գործադիր իշխանության ներկայացուցիչների և ԱԺ պատգամավորների մասնակցությամբ: Կներկայացվեն սոցիոլոգիական հետազոտության, լրագրողական դիտարկումների և հարցախույզի, ՄԻԿ ֆորումի առցանց քննարկման արդյունքները և կառուցողական առաջարկները հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման համար:

4. Ծրագրի շահառուները և անուղղակի շահառուները: Շահառուներն են՝ փոքր և միջին տնտեսվարողները, բոլոր ֆիզիկական անձիք, ովքեր ավտոմեքենա են ներկրում, ՀՄԻԿ կայքէջի այցելուները, <Վասն Արդարութեան> հանդեսի և <Վանաձորյան խճանկար> շաբաթաթերթի ընթերցողները: **Անուղղակի շահառու է** ավտոմեքենա ներկրող յուրաքանչյուր անձ:

5.Ակնկալվող արդյունքները և ազդեցությունը:

1. Բացահայտվել են ներկրվող ավտոմեքենաների մաքսազերծման ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը:
2. Մշակվել են սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով հիմնավորված հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկներ, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարությանը և ՀՀ ԿԱ ՊԵԿ:
3. 100 օրինակ տպաքանակով հրատարակվել է <Վասն Արդարութեան> գիտական հանդեսի 73-րդ համարը, որտեղ տպագրված է սոցիոլոգիական հետազոտության ամբողջական զեկույցը:
4. <Վանաձորյան խճանկար> շաբաթաթերթում բացվել է կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագիր, որը ծրագրի ավարտից հետո շարունակում է գործել:
5. Լրագրողական դիտարկումները և հարցախույզը ամփոփվել են առանձին զեկույցում, որը հրատարակվել է <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթում:
6. Բարձրացել է www.acrpc.am կայքէջի այցելուների, <Վասն Արդարութեան> հանդեսի և <Վանաձորյան խճանկար> շաբաթաթերթի ընթերցողների իրազեկվածության մակարդակը Հայաստան ավտոմեքենա ներկրման դեպքում գործարքի գնի մեթոդով մաքսազերծման ընթացակարգի մասին:
7. Խորացել է ՀՄԻԿ ՀԿ և <Վանաձորյան խճանկար> թերթի համագործակցությունը կոռուպցիոն ռիսկերի վերհանման նպատակով:

Ծրագիրը որոշակի **ազդեցություն** կունենա հակակոռուպցիոն բարեփոխումների օրակարգի վրա, որտեղ կկարևորվի պետական եկամուտների հավաքագրման ոլորտում, այդ թվում՝ նաև այլ ապրանքների մաքսազերծման ընթացքում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդիրը: Ծրագիրը դանդաղորեն բարերար **ազդեցություն** կունենա նաև ներքին շուկայում գնազոյացման և շահառուների, ամբողջ բնակչության կենսամակարդակի վրա:

Ժամանակացույց

(Խնդրում ենք ներկայացնել ծրագրի ժամանակացույցը՝ հետևելով առաջարկվող աղյուսակին: Անհրաժեշտության դեպքում կարող էք ավելացնել լրացուցիչ տողեր:)

Շաբաթ	Գործողություն
1-ին	<p>1. Ծրագրի աշխատակազմի ընտրություն, հրամանագրում:</p> <p>2. Աշխատանքային պայմանագրերի և ծառայությունների մատուցման պայմանագրերի պատրաստում և կնքում:</p> <p>3. Շաբաթական պլան – հաշվետվությունների և աշխատանքային - գործավարական մյուս փաստաթղթերի / գործիքների պատրաստում:</p> <p>4. Իրազեկման և համագործակցության նամակների պատրաստում և առաքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահին</p>
2-րդ	<p>1. Հանդիպում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի նախագահի կամ այլ իրավասու պաշտոնյայի / պաշտոնյաների հետ և քննարկում, պայմանավորվածության ձևերքերում համագործակցության և դրա ձևաչափերի մասին:</p> <p>2. Մամլո հաղորդագրության պատրաստում և տարածում ծրագրի մեկնարկի մասին ՀՄԻԿ կայքէջում, <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում:</p> <p>3. Լրագրողական հարցախույզի հարցաշարի կազմում:</p> <p>4. «Սոցիոմետր» անկախ սոցիոլոգիական կենտրոնի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում:</p> <p>5. Ծրագրավորման մասնագետի ընտրություն և նրա հետ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում:</p> <p>6. <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագրի բացում և առաջին թեմատիկ նյութի տպագրություն</p> <p>7. Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
3-րդ	<p>1. Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսազերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2. ՀՄԻԿ կայքէջի Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>3. <Վասն Արդարութեան> գիտական հանդեսի նյութերի հայթայթում, խմբագրում:</p> <p>4. Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
4-րդ	<p>1. Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսազերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2. <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագրում թեմատիկ նյութի տպագրություն:</p> <p>3. <Վասն Արդարութեան> գիտական հանդեսի նյութերի հայթայթում, խմբագրում:</p> <p>4. Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>5. Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
5-րդ	<p>1. Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսազերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2. <Վասն Արդարութեան> գիտական հանդեսի նյութերի հայթայթում, խմբագրում:</p> <p>3. Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ</p>

	<p>քննարկում:</p> <p>4.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
6-րդ	<p>1.Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսագերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2.<Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագրում թեմատիկ նյութի տպագրություն:</p> <p>3.Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>4.<Վասն Արդարութեան> գիտական հանդեսի նյութերի խմբագրում, սրբագրում:</p> <p>5.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
7-րդ	<p>1.Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսագերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2.Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>3.<Վասն Արդարութեան> գիտական հանդեսի նյութերի խմբագրում, սրբագրում:</p> <p>4.Ծրագրավորման մասնագետի կողմից ՀՄԻԿ կայքէջի նորացման կատարված աշխատանքի ավարտական ակտի ստորագրում:</p> <p>5.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում:</p>
8-րդ	<p>1.Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսագերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2.<Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագրում թեմատիկ նյութի տպագրություն:</p> <p>3.«<i>Սոցիոմեթր</i>» անկախ սոցիոլոգիական կենտրոնի ներկայացրած զեկույցի ստացում և կատարված աշխատանքի ավարտական ակտի ստորագրում:</p> <p>4.Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>5.<Վասն Արդարութեան> գիտական հանդեսի նյութերի խմբագրում, սրբագրում:</p> <p>6.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում:</p>
9-րդ	<p>1.Լրագրողական դիտարկում և հարցախույզ ավտոմեքենաների մաքսագերծման գործընթացի, վարչարարության վերաբերյալ:</p> <p>2.Սոցիոլոգիական հետազոտության արդյունքներով հիմնավորված հակակոռուպցիոն բարեփոխումների առաջարկների ներկայացում ՀՀ կառավարությանը և ՀՀ ԿԱ ՊԵԿ:</p> <p>3.Կլոր սեղանի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ:</p> <p>4.Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>5.<Վասն Արդարութեան> հանդեսի 73-րդ համարի 100 օրինակ տպաքանակով տպագրում և բաշխում շահառուներին:</p> <p>6.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
10-րդ	<p>1.Լրագրողական դիտարկումների և հարցախույզի արդյունքների ամփոփում:</p> <p>2.<Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի կոռուպցիայի դեմ պայքարի</p>

	<p>թեմայով խորագրում թեմատիկ նյութի տպագրություն:</p> <p>3.Կլոր սեղանի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ:</p> <p>4.Մարդու իրավունքների կրթության ֆորումում առցանց թեմատիկ քննարկում:</p> <p>5.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
11-րդ	<p>1.Կլոր սեղան - քննարկում:</p> <p>2.Ամփոփիչ վերլուծություն կոռուպցիոն ռիսկերի գնահատման և խոչընդոտների բացահայտման վերաբերյալ:</p> <p>3.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p>
12-րդ	<p>1.<Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթի կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով խորագրում թեմատիկ նյութերի տպագրություն:</p> <p>2.Մամլո հաղորդագրության պատրաստում և տարածում ծրագրի ավարտի մասին ՀՄԻԿ կայքէջում, <Վանաձորյան Խճանկար> շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում:</p> <p>3.Շաբաթական պլան – հաշվետվությունների ներկայացում</p> <p>4.Նկարագրական և ֆինանսական զեկույցների կազմում և ներկայացում ԻՀԱ-ին:</p>

Բյուջե / Հավելված Budget

(Խնդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)

Ծրագրի բյուջեն կցված է առանձին ֆայլով:

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել եք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

Որևէ այլ կազմակերպության սույն ծրագիրը չի ներկայացվել:

Վերջին երեք տարիներին կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի ցանկ

#	Ծրագրի անվանումը	Ֆինանսավորող կազմակերպություն	Ծրագրի արժեքը	Ծրագրի ժամանակահատվածը
1.	<Մարդու իրավունքների իրազեկության բարձրացում Հայաստանի Արտաշատ, Գավառ, Դիլիջան, Հրազդան, Սևան, Վանաձոր համայնքներում>	Ինստիտյուտ մոբայլ ՄՊԸ	Տարեկան մոտ 500 000 դրամ	2013 - 2016
2	<Ես հիշում եմ...>	Մեծահասակների կրթության ասոցիացիա (վեց երկրներից ընդգրկված ՀԿ-ի հետ համագործակցությամբ)	Գումարը տնօրինել է ասոցիացիան	2014-2016

3.	<i><Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ կրթություն և հաշմանդամություն></i>	Համընդհանուր քարոզարշավ հանուն կրթության միջազգային գրասենյակ	540000 դրամ	2014թ. մարտի 01 – մայիսի 31
4.	"Դեպի իրազեկ համայնքային երիտասարդություն"	ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	498600 դրամ	2013

Ծրագրի առաջարկը պետք է ստորագրված լինի ՔՀԿ-ի ղեկավարի կամ ծրագրի ղեկավարի կողմից և կնքված լինի ՔՀԿ-ի կնիքով:

Դրամաշնորհային հայտին կից ներկայացվելիք փաստաթղթերի ցանկ

1. ՔՀԿ (ների) և ԶԼՄ-ների կանոնադրության պատճենը.
2. ՔՀԿ (ների) և ԶԼՄ-ների պետական գրանցման վկայականի պատճենը՝ ներառյալ բոլոր ներդիրների պատճենները.
3. ԻՀԱ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումների մասնակցության վկայականի պատճենը.
4. հարկ վճարողների հաշվառման համարի (ՀՎՀՀ) պատճենը.
5. բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկություն՝ հաստատված բանկի կողմից (անհրաժեշտության դեպքում հաղթող ճանաչված հայտատուները պետք է ներկայացնել նաև քաղվածք բանկից).
6. ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները,
7. եթե ծրագրի ղեկավարը ՔՀԿ-ի ղեկավարը չէ, ապա ՔՀԿ ղեկավարի կողմից ծրագրի ղեկավարին տրված լիազորագիրը.
8. Պարտավորագիր-նամակներ՝ համատեղ ներկայացվելիք ծրագրերի դեպքում:

Գևորգ Մանուկյան

ՀՄԻԿ ՀԿ նախագահ